

## **ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՕՃԱԽԻՆ ՄԱՍԻՆ (ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)**

### **Մուտք**

Ակներեւ է, որ հայկական սփիւռքը իր լայնագոյն տարածքով ու խորութեամբ, իր ամբողջութեան մէջ, հակառակ իր համապատկերային բնոյթին, միակտուր չէ: Այսինքն՝ այնպէս չէ ինչպէս կոթողանկար մը, ուր հիմնական միակ պատկերուածը կոթողն է:

Սփիւռքի համապատկերը կը գոյանայ բազմաթիւ մասնակի, չաւարտուն, թերի, կիսատ, ձեւաւորուող, կազմաւորուած, սպառած նկարներէ, որոնց բոլորն իրար միացնողն առնուազն վերացական հայկականութեան գիծն է, յաճախ՝ գիտակցուած կամ ենթագիտակիցէն եկող:

Սփիւռքը խճանկար է խորքով եւ բովանդակութեամբ: Ջայն բաղկացնող իւրաքանչիւր դրուագ-նկար կը դրսեւորէ կենսապատումը հայօճախի մը<sup>1</sup>: Ուստի եւ Սփիւռքը հայօճախներուն համապատում-համապատկերն է:

Լսրծուն սահմանում կրնանք տալ միայն հայօճախ եզրին. ան կ'ենթադրէ որոշ համախմբութեամբ, որոշ հայկական զգացողութեամբ, որոշ հայկական կամրջումներով (եկեղեցի, միութիւն, ազգականական կապ...), իրար որոշ չափով առնչուած, որոշ կազմակերպութեամբ գործող հաւաքականութիւն մը՝ տուեալ պետութեան մը միջազգայնօրէն ընդունուած սահմաններով շրջանակուող<sup>2</sup>: Իր կարգին, իւրաքանչիւր հայօճախ՝ օրինակ Լիբանանինը, կը բաղկանայ կամ համադրումն է Պէյրութի, Պուրճ Համուտի, Ջահլէի, Այնճարի, Թրիփոլիի (աշխարհագրական տարածքներով յատկանշուող) ենթօճախներուն:

(Հարց է թէ անհողին տարածքներու ծիրին վրայ յառաջացած ընկերային համացանցերու խմբաւորումները ինչպէս կարելի է բնութագրել):

---

<sup>1</sup> Հակառակ իր մէկ դարու գոյութեան՝ Սփիւռքը չէ ուսումնասիրուած ըստ անհրաժեշտին: Սփիւռքագիտութիւնը նոր սկսաւ Սփիւռքի ընդհանրական, համապատկերային Տեսողութենէն անցնիլ իւրաքանչիւր միաւորի նկարագրական Տեսութեան ու մարտահրաւէրը կը դիմագրաւէ իւրաքանչիւր այդ միաւորին խորքերը թափանցելու:

<sup>2</sup> Սահմանումը տակաւին յստակեցումի եւ որոշակիացուելու մեծ կարիք ունի:

Սփիւռքը համապատկերն է հայօձախներու, բայց նաեւ Հայաստանի Հանրապետութեան եւ Պատմական Հայաստանի հողերէն դուրս գտնուող տարածքներուն մէջ բնակող եւ հայօձախի մաս չկազմող, հայօձախ չգոյացնող անհատին կամ անհատներուն<sup>3</sup>, որոնք (այսօր, վաղը, երբեմն ալ՝ նախապէս) կրնան խմբուիլ ու հայօձախ գոյացնել կամ անջատաբար կրնան առնչուիլ հայկական որեւէ խնդրի՝ ելակէտ ունենալով:

ա. իր/իրենց հայկական ծագումը (որեւէ տոկոսով):

բ. իր/իրենց հայկական ամուսնական կապը (նոյնիսկ ամուսնալուծումէն ետք):

գ. հայկական ծագումով անհատի մը կողմէ իր/իրենց որդեգրուածութիւնը:

դ. իր/իրենց գիտակցուած կամ ենթագիտակիցէն եկող հայկական զգացումը:

Մեկնելով այն իրողութենէն, որ հայօձախները կը տարբերին իրարմէ՝ իրենց տարիքով, հասունութեամբ, խորութեամբ, եւ քանի որ Սփիւռքի բնակիչները մնայուն տեղաշարժի մէջ են, այլ խօսքով միշտ նոր հայօձախներ կամ անհատներ ու չկազմակերպուած խմբակներ կը յառաջանան, ապա անհրաժեշտութիւն կը դառնայ օգտուիլ գիրենք կանխող, իրենց կենսապատումի հանգրուանի մէկ տարբերակը անցած հայօձախներու փորձառութենէն:

Ահա թէ ինչու հայ սփիւռքագիտութիւնը շատ անելիք ունի ոչ միայն որովհետեւ ներկայիս լայնածաւալ Սփիւռք մը գոյութիւն ունի, այլ նաեւ որովհետեւ այդ Սփիւռքը ապագայ ունի:

Մեկնելով այս ելակէտէն՝ պիտի ջանամ լուսարծակի տակ առնել Լիբանանի հայօձախին իւրայատկութիւնները, այն ակնկալութեամբ, որ անոր փորձը կրնայ նախատիպ-ուղեգիծ-տարբերակ-օրինակ ծառայել նոր կազմաւորուող կամ Լիբանանի հայօձախին հանգրուանը չթեւակոխած հայօձախներու:

Պէտք է ընդգծել, որ օրինակումը միուղի չէ, այսինքն՝ փորձառուէն, հինէն դէպի նուազ փորձառուն ու նորը չ» ուղղուիր: Ան բազմուղի է, մանաւանդ որ հին դասական հայօձախը կրնայ օգտուիլ նաեւ նորակազմ հայօձախին նորարարական փորձէն:

### **Լիբանանի հայօձախը**

Լիբանանի հայօձախը նախաեղեռնեան ծագում ունի. հայերը Լիբանանի ներկայ տարածքին վրայ գտնուած են Մեծն Տիգրանի օրերէն. ծանօթ, շօշափելի տուեալները կ'երթան խաչակիրներու օրերը՝ ԺԱ-ԺԲ դարեր: Բայց Լիբանանի հայօձախին սփիւռքեան կեանքը

---

<sup>3</sup> Իբրեւ հայօձախ չկազմաւորուած անհատները, խմբակները յարաբերաբար անշօշափելի եւ ասուպային, չկազմակերպուած ու ոչ հետետողական են:

կը սկսի 1920 Սեպտեմբերին, երբ Լիբանան աշխարհագրական տարածքին կը տրուի պետական սահմաններ, ու կը հռչակուի Մեծն Լիբանան Պետութիւնը:

Արդ, 1920էն ետք կազմաւորուիլ սկսող Լիբանանի հայօճախը ինչով կը բնորոշուի: Այս բնորոշումներէն շատերը կը յարմարին նաեւ շրջանի այլ հայօճախներուն:

**Ա.** Հայերը **մեծ խումբերով** հանուեցան Լիբանանի ծովեզերքի ամբողջ երկայնքին՝ հիւսիսէն հարաւ, շուրջ 160 քիլոմետր երկարութեան մը վրայ: Այս խումբերը մասնատուած ընտանիքներ էին, որոնց հասարակ յայտարարը հողախլունն էր, Ցեղասպանութիւնը, իրենց ինքնութեան պատճառով իրենց կրած հալածանքներն ու զուլումը:

Հակառակ իրենց տասանորդուածութեան՝ ասոնք համագիւղացիներ էին, **նախաեղեռնեան եւ եղեռնեան հասարակաց անցեալ մը ունէին**, ոմանք կը ճանչնային գիրար ծննդավայրէն: Եւ հակառակ, որ ամէն մէկը իր գլխուն ճարին եւ օրուան հացը ճարելու կը ձգտէր՝ ասոնք զօրակից էին իրարու: Ըսել կ՝ուզեն նոյն ինքնութեան պատճառով հալածուած այս գաղթականները **ներքին, անտեսանելի ու տեսանելի համագաղթականական ցանցով, ճակատագրով մը կապուած էին, զօրակցական այլեայլ շերտերու խորութեամբ:**

Ասկէ յարաբերական միաձոյլութիւն մը յառաջացաւ գաղթակայաններուն մէջ, յարաբերաբար նոյն մտածողութիւնը տիրեց, հաւաքական նոյն զգացողութիւնը գերիշխեց համայնական այս վիճակին մէջ. շեշտաւորուած հարուստներ չկային, դասակարգային հեռաւորութիւնները (նոյնիսկ եթէ առկայ էին) կը թերակշռէին համայնական ցաւին, ընդհանրական տառապանքին դիմաց: Այս բոլորը գիտակցուած էր մտովի կամ զգայութեամբ: Այս բոլորին բերմամբ անոնք վերածուեցան **մէկ ընդհանրական, ծաւալուն գերդաստան-ընտանիքի:**

**Բ.** Հաւաքական բնակավայրեր: Անոնք հաստատուեցան որոշակի վայրեր, **հաւաքաբար ապրեցան գաղթակայաններուն մէջ**, ապա շուրջ երկու տասնամեակ ետք, երբ տեղափոխուեցան նուազ անհանգստաւէտ տուներ, դարձեալ բացարձակ մեծամասնութեամբ կողք կողքի, քիթ քիթի ապրեցան:

Դժուար թէ կարելի ըլլայ բաւարար բան ըսել **հաւաքական կեանքի, մէկտեղուածութեան դրական արժանիքներուն** մասին (անշուշտ ասիկա չի վերացնէր նոյն վիճակին ժխտական երեսակները..): Աւելցնենք, որ եթէ վրանաբնակութենէն հիւղաբնակութիւնը տեւեց շուրջ 20 տարի եւ մնաց աշխարհագրական նոյն վայրին մէջ, ապա քարաշէն հայաբնակ թաղամասով մը անոր փոխարինումը գոյատեւեց շուրջ 50 տարի՝ միշտ ունենալով ընտանիքներ, որոնք աւելի կանուխ հեռացան այդ վայրերէն: Շեշտենք, սակայն, որ համախմբուածութիւնը գրեթէ վերացաւ յետ քարաշէն հայաբնակ թաղա-

մասի հանգրուանին, երբ հայեր բնակեցան ոչ հայաբնակ թաղամասերու մէջ<sup>4</sup>:

**Գ.** Հայ գաղթականները տեղաւորուեցան բարենպաստ վայրեր: **Գաղթակայանները կը գտնուէին մեծ քաղաքներուն մուտքերուն կամ ելքերուն մօտ:** Իսկ ատենի Լիբանանի քաղաքները մեծ չէին տարածութեամբ, այսինքն՝ մարդ կրնար իր բնակած ծայրամասէն քաղաքին կեդրոնական բանուկ, տնտեսապէս աշխուժ կեդրոնները հասնիլ քիչ յոգնութեամբ, ինչ-որ դիւրամատչելիութիւն կու տար եւ հնարաւորութիւն, որ աշխուժ վիճակի մէջ շուկայ հասնի որեւէ գնով աշխատելու պատրաստ գաղթահայր: Իսկ իրիկունը, վերադառնալով իր հաւաքական բնակավայր-գաղթակայանը, իր փորձը բաժնեկցի եւ փոխադարձաբար լուսաբանուելով օգտուի՝ յաջորդ օրը աւելի յաջող ու արդիւնաւէտ վերսկսելու համար:

**Դ.** Լիբանան հաստատուած հայը: Եկէք զինք կոչենք այսուհետեւ Լիբանահայ, որը երկրագործական, արհեստագիտական, ձեռային ճարտարութեան թէ կենցաղային ու մտային մշակոյթով **կը գերազանցէր միջին Լիբանանցին:** Ճիշդ է, որ Լիբանահայը ստիպուած էր նոր կենցաղի պատշաճիլ ամէն գնով, ապրելակերպ՝ արհեստ եւ մասնագիտութիւն փոխել, նոր լեզու սորվիլ, այդուհանդերձ ինք մրցունակ տնտեսական տարր էր եւ փնտռուած իբրեւ աշխատաւոր, **ան մրցունակ էր թէ՛ ճարտարութեամբ, թէ՛ աժան ձեռավարձքով, թէ՛ խոնարհութեամբ եւ ենթակայութեամբ (որովհետեւ խոցելի էր):**

**Ե. Ծանոթակութիւններ՝ հայ եւ օտար:** Հայօճախին վերելքին մեծ լիցք տուին արտասահմանի օժանդակութիւնները, որոնք թէ՛ հայկական էին եւ թէ՛ օտար: Ասոնք բազմանպատակ էին. ուղղուած էին թէ՛ որբանոցներուն, թէ՛ կրթաբարեսիրական, առողջական, ընկերային այլեւայլ դրսեւորումներու: Օրինակ, հայ կաթողիկէ պատրիարքարանը կանգնեցաւ պապական ուշագրաւ նուիրատութեամբ, Կիլիկիոյ կաթողիկոսական համալիրը գնուեցաւ պոլսահայ (թէկուզեւ խորհրդանշական) բարերարութեամբ, հայ առաքելական կրթական ցանցի բազոււմ դպրոցներ իրենց խեղճ ու տարրական վիճակէն դուրս բերուեցան շնորհիւ եգիպտահայ, սուրիահայ, ամերիկահայ բարերարութիւններու, հայ աւետարանական դպրոցական ցանցը զարգացաւ շնորհիւ միսիոնարական նուիրաբերումներուն:

Նոյն ծիրին մէջ պէտք է դիտել այն, որ 1920ականներու աւարտէն նկատելի կը դառնայ մտաւորականութեան (մանաւանդ դաշնակցական) միտում մը՝ զօրացնելու Լիբանանի հայօճախը. Լեւոն Շանթը

---

<sup>4</sup> Լիբանանի պարագային նման միակ բացառութիւնը կը հանդիսանայ Պէյրութի արուարձան Մըզհէր շրջանը, ուր որոշ զանգուածայնութեամբ տեղափոխուեցաւ հայութիւնը անձնական նախաձեռնութեամբ քան թէ կուսակցական, միութենական կամ հաստատութենական դրդումով:

Գահիրեէն Պէյրութ կու գայ հիմնելու Համազգայինի Ճեմարանը, Գասպար Իփեքեանը Գահիրեէն Պէյրութ կու գայ հիմնելու Համազգայինի թատերախումբը, Պերճ Ֆազլեանը կ»ապաստանի Պէյրութ՝ Պոլիսէն, Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը անորոշ թափառումներէ ետք, աւանադական արմատներով հարուստ իր Հալէպի թեմը ձգած կը հաստատուի Պէյրութի արուարձան Անթիլիասի մէջ: Աւելի ետք՝ 1950ականներուն, Պէյրութ կը փոխադրուին հայ քաղաքական կուսակցութիւններու եւ համահայկական կազմակերպութիւններու շրջանային կեդրոնները: Յատկանշական է, որ այս տեղաշարժերը սկիզբ կ» առնեն այնպիսի ժամանակաշրջանի մը, երբ Պէյրութը բաղդատմամբ Հալէպի ու Եգիպտոսի ընդամէնը գաւառական կշիռ մը ուներ, մինչ Հալէպը դարերու հաստատութեան կործ, իսկ Եգիպտոսը կուռ եւ հարուստ ու կազմակերպ հայօճախ էր, որ Միջին Արեւելքի հայութեան առաջնորդութիւնը կը վարէր<sup>5</sup>: Այս բոլորը օգնեցին, որ Միջին Արեւելքի հայկական առձակատումի էփիկեդրոնը դառնայ Լիբանանը եւ դառնայ նաեւ առաջնորդող փարոսը:

**Զ. Ճակատագրակից վիճակ:** Լիբանանը շուրջ 500 տարի (1514-1917) գտնուած էր օսմանեան տիրապետութեան տակ: Բացի սիւննի խաւի որոշ օղակէ մը՝ բոլորն ալ, մանաւանդ՝ քրիստոնեաները, շիիթները ենթակայ էին օսմանեան խտրականութեան: Դեռ աւելին, 6 Մայիս 1916ին Պէյրութի կեդրոնական հրապարակին վրայ կախադան հանուած էին լիբանանցի ազատականներ (ներառեալ սիւնիներ), որոնք ջատագովեր ազատութիւն ու ձգտեր էին օսմանեան լուծը թօթափել: Այլ խօսքով, զօրակցութիւն մը կամ հասարակաց տառապանքի մը զգացումը եւ նոյնանձնեայ չարչարողի մը առկայութիւնը **լռելեայն կարեկցանք մը (կամ առնուազն հակակրութեան մը բացակայութիւնը)** կը յառաջացնէր հայոց հանդէպ:

**Է. Երկիրը հանրապետութիւն հռչակուած էր Սեպտեմբեր 1920ին, իսկ հայերս եկանք Նոյեմբեր 1921ին:** Այլ խօսքով, **կեանքը նոր սկիզբ կ»առնէր թէ՛ գաղթահայութեան, թէ՛ Լիբանանի համար:** Հետեւաբար, բոլոր լիբանաբնակները կը գտնուէին նոր կեանք մը, նոր երկիր մը, հաւաքականութիւն մը կերտելու սկիզբին: Այս առումով, նոր իրավիճակի մը մէջ կը մտնէին թէ՛ նորեկ լիբանահայերը, թէ՛ լիբանանաբնակները: **Չծեւադրուած գաղթահայութիւն մը կը մխրձուէր չծեւադրուած պետականակիր նոր հաւաքականութեան մը**

---

<sup>5</sup> Միջին Արեւելքի հայութեան ծանրութեան կեդրոնի Պէյրութ տեղափոխումը կրնայ, հաւանաբար, հայ առաջնորդներու հեռատեսութեան վերագրուելու կողքին առնչուիլ Եգիպտոսի մէջ ՀՅԴ-ՀԲԸՄ/ՌԱԿ մրցակցութեան արդիւնքին անյատակութեան եւ ՀՅԴի մարտավարութեան մրցադաշտը փոխադրելու տարածք մը, ուր աւելի հաւանականութիւն կար գլխաւորելու հայօճախը, կամ ալ՝ մրցակցութեան երկրորդ ձակատով մը հաստատելու իր գերակաշռութիւնը:

**մէջ:** Հետեւաբար, միախառնումը յարաբերաբար նուազ կարծր ու քիրտ կ'ըլլար:

**Ը.** Երկրին Պետական Դրուածքը: Դժուար է բառերով արժեւորել Լիբանանի պետական կառոյցին գործօնը Լիբանանի հայօձախին վերելքին մէջ:

**Լիբանանի պետական հիմնակառոյցը համայնքային է:** Լիբանանցին նախ համայնքի անդամ կ'արձանագրուի, որուն հիմամբ ալ պետութիւնը իրաւասութիւն կ» ունենայ անոր լիբանանցիութիւն շնորհելու: Լիբանանի պետութիւնը լիբանանցին կը ճանչնայ միայն իբրեւ այս կամ այն համայնքի անդամ: Ճիշդ է՝ լիբանանցի անհատին կամքէն կախեալ է որ համայնքին պատկանիլը, բայց իր կամքէն կախեալ չէ իր համայնքայնութիւնը: Այլ խօսքով լիբանանցին կրնայ հրաժարիլ մարոնիթ լիբանանցի ըլլալէ, բայց այնքան ատեն, որ ան ուզէ լիբանանցի մնալ, պէտք է պատկանի ինչ-որ համայնքի մը: Ինչ խօսք, ասիկա լիբանանցիին մէջ յառաջացուցած է մտադրոյթ մը, մտայնութիւն մը, որ կը մղէ զինք **համայնքական նախապատուութեան. ան համայնքային կը մտածէ քան թէ համալիբանանեան:**

Ասոր պէտք է աւելցնել իշխանութեան համայնքային պաշտօնաբաշխումը. իւրաքանչիւր համայնք սահմանադրականօրէն իրաւունք ունի իշխանութեան մէջ բաժին ունենալու: Ասիկա համայնքը կը դարձնէ իշխանութեան եւ օրինականութեան մասնակի տէր: Կարելի է ըսել նաեւ, որ համայնքները հաւասարագօր են Լիբանանի մէջ, որովհետեւ ցարդ Լիբանանի Հանրապետութեան մէջ չկայ հանգրուան մը, երբ համայնք մը դարձաւ իշխանութեան բացարձակ տէրը: Որովհետեւ ոչ մէկ համայնք աւելի մեծ է, քան մնացեալ համայնքները միասնաբար: Ասիկա ուժերու մնայուն յարաբերականութիւն եւ հաւասարակշռութիւն կը պարտադրէ ու կը սանձէ յաւակնորդ որեւէ համայնքի ախորժակները՝ աչք խբելով հանդերձ մեծ ու փոքր ոտնձգութիւններու եւ խախտումներու:

Նոյն ծիրին մէջ նոյնքան կարեւոր երեւոյթ է **համայնքներուն վայելած մշակութային եւ կրօնական ինքնավարութիւնը:** Դեռ աւելին, պետութիւնը նիւթապէս կը սատարէ համայնքային այլեւայլ կազմակերպութիւններու գոյատեւման: Փաստօրէն, Լիբանանի հայօձախը, ըստ իր կարողականութեան, կրնայ գոյացնել իւրատեսակ կիսապետութիւն մը ներքին գրեթէ լիարժէք ինքնիշխանութեամբ: Ասիկա թափ կու տայ եւ ազգային գործունէութեան անկաշկանդ դաշտ կը յառաջացնէ լիբանահայուն համար:

Եւ քանի որ պետութիւնն ու համայնքները միջամուխ չեն այլ համայնքներու ներքին ինքնավարութեան, իւրաքանչիւր համայնք իր ներքին օրինաչափութեան համեմատ կը զարգանայ կամ կը նահանջէ:

Վերոյիշեալ երեւոյթները պատճառ կը դառնան, որ Լիբանան ըլլայ տկար, իր գերիշխանութիւնը, իր համայնքներուն կողմէ բռնաբարուած պետութիւն մը: Այս իրողութենէն իր զօրութեան համեմատութեամբ կ'օգտուի իւրաքանչիւր համայնք ի հեճուկս պետութեան:

**Թ.** Քաղաքական նկրտումներ: Պէտք է շեշտել, որ պետութիւնը եւ ընդհանրապէս Միջին Արեւելքի արաբ պետութիւնները չհակադրուեցան հայութեան, որովհետեւ սկիզբէն եւեթ **հայութիւնը չունեցաւ քաղաքական ախորժակներ, քաղաքական նկրտումներ ու պահանջքներ**, այլ խօսքով՝ չմխրճուեցաւ իշխանութեան պայքարի ու մրցակցութեան մէջ<sup>6</sup>: Միջին Արեւելքի հայօճախները միշտ ալ մնացին օրինապահ, կանգնեցան պետականութեան կողքին՝ անոր մէջ գտնելով իրենց ապահովութեան երաշխիքը<sup>7</sup>:

**Ժ.** Կարելոր է նշել նաեւ Լիբանան պետութեան շրջանային մրցունակութիւնը: Այս երկրին մէջ է, որ ազատականութիւնը, ժողովրդավարութիւնը, շուկայական տնտեսութիւնը (արեւմտեան տնտեսվարութիւնը) միջինարեւելեան իր առաւելագոյն դրսեւորումները ունեցան: Ասոր հետեւանքով, հակառակ հայօճախէն դէպի արեւմուտք մնայուն արտահոսքին, միշտ ալ նոր ու թարմ ներհոսք եղաւ դէպի Լիբանանի հայօճախ դրացի երկիրներէն, ինչը վառ պահեց զայն թուային առունով եւ երաշխաւորեց անոր առողջ վերարտադրութիւնը:

**ԺԱ. Գաղափարախօսական լիցքաւորում:** Յայտնի տեսութիւն է, որ դատ մը, խնդիր մը վառ պահելու կամ յօգուտ անոր խումբ մը զօրաշարժելու համար պէտք է անոր հակառակորդ, թշնամի յառաջացնել: Այս պարագային թշնամին կար, կար նաեւ զոհը, կը մնար գաղափարախօսական բանաձեւում տալ առկայ վիճակին: Լիբանահայը նիւթաբարոյական տնտեսական դժուար վիճակի մէջ կ'ապրէր: Տեղահանուած, արմատախլուած էր իր հայրենիքէն, ջարդուած էր իր ազգը, կողոպտուած էր իր հարստութիւնը, եւ այս բոլորին պատճառը թուրքն էր: Այն թուրքը, որ ըստ ժողովրդական պատումին ուզած էր մէկ հայ թողուլ ան ալ թանգարանը: Այն թուրքը, որ փրկութեան ելք իբրեւ առաջարկած էր հայուն թրքացումը: Ուստի թուրքը, իրաւամբ, դարձաւ գաղթական լիբանահայուն ոխերիմ հակառակորդը: Անոր սկսաւ հակադրուիլ լիբանահայը իրեն հասանելի բոլոր ոլորտներուն մէջ: Այս հակադրութիւնը ունեցաւ բազմաձեւ դրսեւորումներ՝ կառչիլ հայ դատին, կուսակցականանալ, իւրացնել արեւմտահայերէնը, դառնալ ազգայնական...: Ասիկա վերաճեցաւ գիտակցուած զգոնութեան՝ հանդէպ հայկականութեան: Համատա-

<sup>6</sup> Ըսենք, որնակ, ի տարբերութիւն շրջանի քիւրտերուն:

<sup>7</sup> Ուշագրաւ է, սակայն, որ նոյն այս գաղթականութեան մէկ մասը հակադրուեցաւ խորհրդահայ պետականութեան:

րած միջավայրն ու պայմաններն ալ նպաստեցին նման վերափոխութեան: Միւս կողմէն՝ Լիբանան հաստատուած **հայ քաղաքականացած մտաւորականութիւնը եւ կուսակցական ղեկավարութիւնը** յաջողեցաւ ոչ միայն լաւապէս բանաձեւել տրամադրութիւնները, այլեւ տէր կանգնեցաւ իր հռետորաբանութեան, շեշտաւորած այդ զգացումները վերաճեցուց գաղափարախօսութեան, ազգայնական քաղաքականացուած թափ դրաւ անոնց մէջ: Այլ խօսքով՝ յանձնառու առաջնորդները բարձիթողի ու ինքնահոսի չծագեցին այս տրամադրութիւնները եւ զանգուածը ուղղորդեցին ըստ հարկն է: Ջրղեղեցին զանոնք վերադարձի հաւատքով, ամրակայեցին վիպական ապագայով ու զանգուածները ազուցեցին լեզու-մշակոյթ-հաւաքականութիւն-Հայ Ղատ ականդերուն:

Եթէ լիբանահայ ղեկավարութիւնը այս ծրագրաւորումով գործեց, անդին լիբանահայ զանգուածը դրապէս արծագանքեց այս մօտեցումին, ամբողջ ոգիով փարեցաւ այս ընթացքին, թոն տուաւ դպրոցաշինութեան, հայրենակցական միութիւններու ծրագիրներուն, եկեղեցաշինութեան, կուսակցականութեան, դարձաւ պատրաստակամ հետեւորդ:

Իսկ Թուրքիան յաճախ ինքնակամ, յաճախ ալ կողմնակի գրգռութեամբ ինքզինք դրաւ թշնամիի վիճակին մէջ. հակադրուեցաւ Միջին Արեւելքի հայութեան, դատ բացաւ լիբանահայ Ջարթօնք եւ Ազդակ օրաթերթերուն դէմ, միշտ յիշեցուց (յաճախ ալ լիբանահայուն յիշեցուեցաւ) առկայ թշնամանքը: Բան մը, որ նպաստեց լիբանահայ ազգայնականութեան, որ ունեցաւ այլեւայլ դրսեւորումներ:

### **Ամփոփում**

Ահա ամփոփ կէտերու մէջ ջանացինք տալ Լիբանանի հայօճախին իւրայատուկ երեսակները եւ այն գործօնները, որոնց շնորհիւ ան արմատապէս առանձնայատուկ տեղ կը գրաւէ Սփիւռքի պատմութեան մէջ: Անշուշտ, վերոյիշեալ կէտերով չի սահմանափակուիր Լիբանանի հայօճախին իւրայատկութիւններու դաշտը:

Ուշադիր հետեւողը վերոյիշեալ գործօնները պիտի խմբաւորէր երեք օղակներու մէջ.

1. **Տեղայնական, ինքնակայ, անկախ գործօններ:** Այսինքն՝ ազդակներ, որոնց առկայութիւնը կախեալ չէր Լիբանան հաստատուած հայ գաղթականութենէն: Այդ առումով պէտք է առանձնացնել՝ 1) տեղական՝ համայնական-նահապետական մշակոյթը, քան թէ անհատապաշտական մշակոյթը, 2) միջավայրը, որ համայնքային քաղաքականութեամբ կը բանէր, եւ 3) մթնոլորտը, ուր գերիշխողը համայնքային պահպանողականութիւնն էր:

2. **Հայօճախէն կախեալ գործօններ:** Այսինքն՝ ազդակներ, որոնց առկայութիւնը կախեալ չէր Լիբանան պետութեան դրուածքէն: Այս



առունով, պէտք է առանձնացնել հայերուն ճարտարական մրցունակութիւնը, գաղափարախօսական լիցքաւորութիւնը, մէկտեղութիւնը, հայ դեկավարութեան առաջնորդութեան հոգածութիւնը եւ անտէրութեան ու ինքնահոսի չթողուլը լիբանահայութեան:

3. Վերոյիշեալ երկու օղակային գործօններուն կու գայ աւելնալ նաեւ **անոնց շփումին**, **անոնց համադրումով թէ հետեւանքով ծնունդ առած նոր իրականութիւններու օղակը**, որ անկախ թէ կախեալ, ներքին թէ արտաքին տուեալներէն ձեւաւորեց եւ զարգացուց ներքին օրինաչափութիւններով իւրայատուկ Լիբանանի հայօճախը: Մարդակերտ այս օղակին մէջ վճռական դեր ունեցան զգօն դեկավարութիւնը եւ անոր յառաջացուցած իրավիճակին թեր եւ դէմ միջամտութիւնները, զարգացումները: Այլ խօսքով՝ աշ երրորդ օղակը գործընթացն է եւ անոր արդիւնքը, որ յառաջացան վերոյիշեալ երկու օղակներուն փոխներգործութենէն:

Կարելի էր աւելի խորացնել դիտարկումը, մանրամասնել երրորդ օղակին արդիւնքները, հանգրուանային հետեւանքները եւն.: Պէտք է զգուշանալ, սակայն: Չենք կրնար Լիբանանի հայօճախը օրինակելի նկատել բոլոր ոլորտներուն մէջ: Ան ամէնայաջողը չէ սփիւռքեան բոլոր նախածեռնութիւններուն մէջ: Օրինակ, Հայ Ռատի ծիրին մէջ Լիբանան պետութեան ճանաչումը Հայոց Ցեղասպանութեան (ճիշդ է, որ միակ արաբ պետութիւնն է եւ կրկնակի յայտարարութեամբ) պատահեցաւ առաջին պետական ճանաչումէն՝ Ուրուկուէյի ճանաչումէն մի քանի տասնամեակ ետք:

**Андраник Дакесян (Ливан), *Характерные черты армянской общины Ливана.***

**Antranik Dakessian (Lebanon), *The Characteristic of the Lebanese Armenian Community.***